

«Դիվան հայ վիմագրության», պրակ VI, կազմեցին Ս. Ա. Ավագյան.
Հռ. Մ. Զանփուլադյան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1977, 330 էջ:

Վիմագիր նյութերը բացառիկ արժեք են ներկայացնում պատմական անցյալի իրողությունների ճշմարիտ ու անեղծ պատկերը ներկայացնելու համար: Գրչական կամ խմբագրական միջամտություններից զերծ՝ նրանք գիտության ամենատարբեր բնագավառներին հաղորդում են մեր նախնիների տեսնական ու քաղաքական, հոգևոր ու մշակութային կյանքի այնպիսի մանրամասներ, որոնք բացակայում են այլաբնույթ աղբյուրներում կամ էլ մեզ են հասել աղավաղ տեսքով ու բովանդակությամբ: Այս է պատճառը, որ հնուց ի վեր հայագիտությանը սնունդ ավելի ակունքների մեջ իր առաջնակարգ տեղն է ունեցել վիմագրությունը, և մասնագետների համար միշտ էլ տոն է եղել վիմագիր նյութերի ամեն մի հավաքածուի հրատարակությունը:

Մկրդից ասենք, որ հայկական վիմագրերի բարեխիղճ հավաքման ու գիտական մակարդակով հրապարակման բնագավառում նշանակալից գործ է կատարված: Արդեն մենք ունենք Անիի, Սյունիքի, Սևանի արևելյան ափի, Հաղբատի, Սանահնի, Հովհաննավանքի վիմագրերի հավաքածուները, Երևանի ու շրջակայքի և մի շարք այլ վայրերի մասնակի, ոչ ամբողջական հրապարակումները: Տպագրվում է Արցախի ժողովածուն, և արդեն ընթերցողին է հասել Իջևանի շրջանի, որը կազմում է հայ վիմագրության Դիվանի VI պրակը: Սակայն վիմագրագետներին են սպասում պատմական Հայաստանի մյուս նահանգների ու գավառների վիմական արձանագրությունները: Իսկ ժամանակը, որ այս հարցում խաղում է միայն ավերիչ դեր, չի սպասում: Եթե ընդամենը երկու տասնամյակ առաջ որևէ հուշարձանի վրայի շատ արժեքավոր մի արձանագրություն դեռևս կարելի էր վերծանել ու փրկել կորստից, այսօր այդ անհնար է անել. տառերը բաց երկնքի տակ քայքայվել են մթնոլորտային տեղումներից, իսկ հաճախ՝ մարդկանց բարբարոսական վերաբերմունքից: Հասկանալի է, որ հապաղումն այստեղ հավասար է անուղղելի սխալի:

Այսպիսով, մեր սեղանին է «Դիվան հայ վիմագրության» պատկանելի շարքի VI պրակը. որի նյութերը հավաքել են Սուրեն Ավագյանն ու Հռիփսիմե Զանփուլադյանը: Ավելի ճիշտ՝ «Հ. Զանփուլադյանը հավաքել և վերծանել է Հաղբատի, Նոր Գետիկի, Զուխտակ վանքի և Մաթոսավանքի արձանագրությունները», ինչպես նշված է գրքի առաջաքանում, իսկ Ս. Ավագյանը ոչ միայն հավաքել ու վերծանել է պրակում ընդգրկված տարածքի մնացած բոլոր վանական համալիրների (Մակարավանք, Մորո ձորո վանք, Առաքելոց վանք, Դեղձնուտ, Սամսոն և այլն) ու հնավայրերի, խաչքարերի և առհասարակ բոլոր տեսակի քարերի արձանագրությունները, այլև կազմել է բոլոր հուշարձանների ու հնավայրերի բազմատեսակ նկարագրությունները, գրել արձանագրությունների (նաև Հ. Զանփուլադյանի հավաքածուների) հանգամանալից ծանոթագրությունները:

Հայտնի է, որ մեր վիմական արձանագրությունների ընդօրինակողները, սկսած Ծսայի Հասան-Ջալալյանից մինչև Մակար Բարխուտարյանցն ու Մեսրոպ Մագիստրոսը, — որքան էլ արած-թողածով արժանի ամենայն երախտագիտության, — լավագույն դեպքում եղել են ընդօրինակողներ: Նրանք ընդօրինակել-հավաքել են մեր հոգևոր կենտրոնների ու մնացած հուշարձանների՝ իրենց կարծիքով կարևորագույն վիմական արձանագրությունները, առանց վերջիններիս հարուցած հարցերը պարզաբանելու, երբեմն անուշադրության մատնելով վիմագրերի առանձին մասեր կամ դրանք շարադրելով ըստ բովանդակության: Միայն Գարեգին Հովսեփյանի ու Հովսեփ Օրբելու ջանքերի շնորհիվ էր, որ հայ վիմագրությունը մտավ գիտական վերծանման ու հետազոտական ճանապարհը: Իսկ սովետական տարիներին կարո Ղաֆաղարյանի ու հատկապես Սեդրակ Բարխուդարյանի բազմամյա տքնությամբ հայագիտության գանձարանը մուծվեցին տպագիր հավաքածուներ, որոնք իրենց հիմնական մասով արժանահավատ և բարձր 11—8

աղբյուրներ են և անսպառ նյութ պիտի հաղորդեն հայագիտության ամենատարբեր բազմազան-ների հետազոտողներին:

Առանց լափազանցության պիտի ասել, որ Ս. Ավագյանի աշխատանքն իրենով նշանա-վորում է հայ վիճագրության զարգացման մի զգալի նվաճում. որը, օժտված լինելով այդ բնագավառի նախորդ շրջանի արժանիքներով, բերում է գիտական մոտեցման, նյութը բոլոր կողմերից դիտելու և հետազոտելու մի ինքնահատուկ եղանակ, որը իրենը՝ Ս. Ավագյանին է և որը հնարավոր է դարձել այն բազմակողմանի ու խոր պատրաստության շնորհիվ, որի տերն ինքը՝ Ս. Ավագյանն է:

Ս. Ավագյանը 1973 թ. լույս ընծայած իր «Վիճական արձանագրությունների հնչյունա-բանություն» մեծարժեք աշխատությամբ, ինչպես նաև նրանից առաջ ու հետո գիտական պար-բերականներում՝ հրապարակած մի շարք հետազոտություններով բացել ու բացահայտել է մեր վիճագրերի մեջ գտնվող բազմաթիվ այնպիսի կարևոր իրողություններ, որոնք կամ առեղծված-ներ էին մնացել նախորդ հետազոտողների համար, կամ նրանց ուշադրությանը չեն արժանացել սոսկ այն պատճառով, որ իրենց խոր էությունը ծածկած են ունեցել բառաձևաբանական ան-սովոր կեղևով, կցազրպական բարդացումներով կամ այսպիսի հանելուկներով, որոնց բացահայտումն ու մեկնաբանությունը պահանջում են երկարատև, հոգեմաշ աշխատանք, բայց որ ամենակատարն է՝ վիճագրի խորքը թափանցելու հմտություն և տեսածը հասկանալու, հաս-կացածը մեկնաբանելու կարողություններ: Այսօրինակ առեղծվածների վերծանություններն ու մեկնաբանությունները հնարավոր են դարձել գիտական քանիմաց ու քննադիր հետազո-տության շնորհիվ:

Ս. Ավագյանը երբեք չի բավարարվում խնդրո առարկա վիճագրերի հարուցած հարցերի այն պատասխաններով, որ սովել են նախորդ հավաքողներն ու հետազոտողները: Երբ կարիքը կա, նա պրպտում-գտնում է նոր մի հարց և նախանձելի բարեխղճությամբ պատասխանում նրան: Կատարում է պատմական ու բանասիրական էքսկուրսներ՝ պարզելու համար արձա-նագրության մեջ հիշատակված այս կամ այն անվան տիրոջ ո՞վ ու ինչպե՞ս լինելը, ճշգրտում է մինչև հիմա առաջարկված որևէ ընթերցումը կամ գտնում ու հաստատում վիճագրում չի-շատակված թվականը: Ինչ վերաբերում է նրա կատարած լեզվական-քերականական քննու-թյուններին, ապա դրանք առանձին վերցրած՝ արդեն մի առանձին մենագրության արժեք ունեն: Այդպիսի քննություններ են սփռված պրակի տասնյակ ու տասնյակ էջերում, բայց այն, ին-կատարված է 19 (խոսակցական-ժողովրդական լեզվի տարրերի թափանցումը գրաբարյան ձևերի մեջ), 69—72 (հնչյունաբանական անկանոնությունների բացատրություններ), 78 (բար-բառի ու օտար լեզվի ազդեցություններով գրաբարյան ձևերի մեջ մտած փոփոխությունները՝ մեկնաբանություն), 82 (դրական մանրամասների ճշգրտումով սոցիալ-տնտեսական կարևոր երևույթների բացատրություն), 127, 131 (ձևաբանական քննություններ) և հետագա շատ էջերում, վաղ ապացույցն է լեզվաբանական ու պատմագիտական խոր պատրաստականու-թյան և օրինակ պետք է հանդիսանա վիճագրական գործին ծառայող մեր մյուս հետազոտող-ների համար:

Հատորը, նախորդների պես, օժտված է անհրաժեշտ ցանկերով ու լուսանկարներով: Ունի քարտեզ, որը նորություն է ու խրախուսելի, քանի որ ընթերցողն ուրիշ ոչ մի քարտեզում չէր գտնի բոլոր այն հուշարձանները, վանքերը, եկեղեցիները, հնավայրերը և այլն, որոնց մասին խոսք է գնում գրքի մեջ: Հաճելի տպավորություն է թողնում նաև տպագրությունը, չհաշված մի քանի էջերը (9, 131 են), որոնցում տեքստերի շարվածքների տեղերն են շիտթվել: Ուրա-խալի է, որ վիճագրերը զծագրող Ն. Խանզադյանը ևս ամենուրեք հարազատ է մնում բնագրե-րին: Լուսանկարների, վերծանությունների ու Ն. Խանզադյանի կատարած զծագրերի համեմա-տությունը ցույց է տալիս, որ զծագրերին են փոխանցվել արձանագրությունների գրական ու քանդակազորական բոլոր անհրաժեշտ մանրամասները, որոնք բարի ծառայություն պիտի մատուցին մեր միջնադարյան մշակույթի տարբեր բնագավառներն ուսումնասիրողներին:

Կարելի էր Ս. Ավագյանի աշխատանքի մեջ նկատվող վրիպակների մասին չխոսել: Նրանք իսկապես միայն վրիպակներ են, ինչ-որ չափով նույնիսկ հասկանալի՝ այսքան մեծ ու բարդ մի գրքում: Մանավանդ, որ գրքի՝ վերը հիշված ու չհիշված արժանիքների առկայությամբ էլ վրիպակները հարուցում են միայն ներողամտություն: Բայց ուշադրություն հրավիրելու հա-մար ստիպված ենք նշել նրանցից մի քանիսը:

Իջևանի շրջանը Գուգարք նահանգի մեջ չի մտել, ինչպիսի պնդում կա հատորի առաջա-բանում (էջ 5): Այն միշտ էլ Ուտիքին է եղել՝ իսկապես Կայեն գավառանունով, ինչպես նշված է նույն տեղում:

Ի վանն աթարևկ Ջաբարյանը վախճանվել է 1233 թ. և ոչ թե իրանից մի քանի տարի
սուսց (էջ 18), համեմատն դեպս 1232 թ. և ա ղեռնս կենդանի է եղել:

Թագնի վանք է կոչվել ոչ թե Դագի կամ Խութա վանքը (էջ 89), այլ Տաթևը:

«Նոսուն ինձ և ժամ ղեկեղեցիս»-ի մեջ վերջին բառի զ սխաղիբս սխալ է համարված
/«անհայտ է փորագրողի սխալը, զ նախդիրի փոխարեն պետք է լիներ յ», էջ 141): Մինչդեռ
միջնադարյան մեր վիճադրերի մեջ հենց այդ ձևն է տարածված, ուրեմն՝ և ճիշտ: Այդ հեշտ է
նկատել նաև սույն պրակի այլ արձանագրություններում (էջեր 82, 85, 157, 186 նն), որոնք
սխալ կապ անդրազևտ չեն համարվում «գիտելիք»-ժանոթագրություններում:

Կարելի էր հուսալ նաև, թե այսքան յուրջ մի գրքում չէր լինի Գրիգոր Պատմիչին կպած
«Սաղարիա Արեղայի (Ականցի)» երկտակ թյուրիմացությունը:

Հստ երևույթին անհնար է պատկերացնել նման մի աշխատանքի հրատարակություն, որը
դեռ չի լինի թերությունից կամ վրիպակից: Կարևորն այն է, որ արվել է հնարավոր ամեն ինչ՝
դիտական անհրաժեշտ մակարդակ պահպանելու համար: Եվ այս համոզումով ես փակում
VI պրակը՝ երախտագիտությամբ լցված նրա հրապարակ դալու հետ առնչվող բոլոր ընկեր-
ակերի, հատկապես Ս. Ավագյանի նկատմամբ:

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱՅԱՆ

Պատմական գիտությունների ղեկավար